է, որ վերջիններս էլ ամփոփուեցան «ի գիւղն Թորդան» «առ մեծ Հայրապետին Գրիգորի»։ Ցիշելով թէ մի քանի տեղեր կան, որոնք «կանոնաւ ի Հայրապետացն և ի Թագաւորացն պատուեալք լինէին» Փաւստոս իբրև մի օրինակ էլ նշանակում է Թորդանի եկեղեցին «վասն գերեզմանացն։» Թէև փոքր ինչ շփոթ է այդ տեղում (Գ. 14) Փաւստոսի գրութիւնը, բայց մտքից կարելի է մակաբերել, որ գերեզմաններ ասելով, աչքի առաջ ունի ինչպէս «Հայրապետին Գրիգորի» նմանապէս և նորա մօտ ամփոփուած Ս. Վրթանէսի և Ս. Ցուսիկի, նաև Ս. Տրդատ արքայի գերեզմանները. վերջինս պէտք է ամփոփուած լինէր իսկապէս Նոյն գաւառի Անի կամ Կամախ ամրոցում, որովհետև այդ էր հին Արշակունի թագաւորների դամբարանը, բայց ինչպէս Փաւստոսի խօսքերից, նմանապէս և այլ աւանդութիւններից երևում է, որ Ս. Տրդատի մարմինն էլ նորա լծակցի մօտ դրուեցաւ։ Մ. Խորենացին Տիրամօր պատկերի պատմութեան մէջ յիշում է, որ Ս. Գրիգոր իրեն հետ շրջեցնում էր Ս. Բարթուղիմէոս առաքելոյ Դարբնաց Քարի վերայ կանգնած խաչը, որ յետոյ, ասում է, դրուեցաւ Ս. Տրդատ արքայի գերեզմանի վերայ. և որովհետև այդ տեղ խօսքը Հոգեաց վանքի վերայ է, որ հաստատուեցաւ Դարբնաց Քարի մօտերը, սխալ հետևութիւն են հանել աւանդութեամբ իբր թէ Ս. Տրդատ արքայ